*703. ԵԿԵՂԵՑՈՒ մուտքի բարավորի վրա 5 տող.*

ԵՍՊՐՆՀՄԻՆՋՐՍ ՄՐ ԱԾԱԾՆԵԿՂՑՍՅԻՇՏԿԻՆՉԵԻԻՄ
ԾՆՂՑՆՀԱՅՐՆԱՊՐՀԱՄԻՆԵՂԲՐՆԻՄՀՅԿՋՆՅՇՑՔԻՔՍ
ԵՍՆՕԱՐԳՍ։ՏԱՆՏՐՎԵՐԿՅԻԵԿԵՂՑՍԵՏՈՒ։Ե ԹՄՆՅԻՇՏԿ
ԻՆՉԵԻԻՄԾՆՂՑՆ։ՄԵՆՏՐԿԻԱ ՎՐԴ ՊՏՌԱՔ
Ե։ ԹՄՆ։ՅԻՇՏԿՄԵՋԵԻՄԵՐԾՆՂՑՆԻԹԻՒՆ ՌՃԼՄԷԿՆ

ԵՍ ՊԱՐՈՆ ՀՄԻՆՋՐՍ ՄՐ. ԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՍ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՉ ԵՒ ԻՄ| ԾՆՈՂԱՑՆ. ՀԱՅՐՆ ԱՊՐՀԱՄԻՆ, ԵՂԲԱՅՐՆ ԻՄ ՀԱՅԿԱԶՆ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.:| ԵՍ ՆՕԱՐԳՍ ՏԱՆՈՒՏԷՐ ՎԵՐԱԿԱՑԻ ԵԿԵՂԵՑՈՒՍ ԵՏՈՒ :Ե: ԹՈՒՄԱՆ ՅԻՇԱՏԱԿ| ԻՆՉ ԵՒ ԻՄ ԾՆՈՂԱՑՆ։ ՄԵՆՏՐԿԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՏՈՒԱՔ| :Ե: ԹՈՒՄԱՆ ՅԻՇԱՏԱԿ ՄԵԶ ԵՒ ՄԵՐ ԾՆՈՂԱՑՆ. Ի ԹԻՒՆ :ՌՃԼ: ՄԷԿՆ. (1682):

*Ծանոթ. Չայնավորների մեծ մասի կրճատման հետևանքով անձնանունների մի մասը մնում է անհասկանալի։*

*704. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, ընկած է եկեղեցու բակում, վրան 3 տող.*

ԵՍՊՈՂՈՍԿԱՆԳԵՅԱՅ
ՄՐ ԽՍ· · · · · · ՍԱԿԵՂ
ՔՆ · · · ՆԱՒԱՍԱՐԴԻՆ

ԹՎ
ՌՃ
Դ

ԵՍ ՊՈՂՈՍ ԿԱՆԳՆԵՑԱՅ| ՄՐ ԽԱՉՍ...| ՍԱԿԵՂ|ՔՆ · · · ՆԱՒԱՍԱՐԴԻՆ. ԹՎԻՆ :ՌՃԴ (1655):

*Ծանոթ. Թվականը արևմտյան ճակատին է։*

*705. ՏԱՊԱՆԱՔԱՐ, ընկած է եկեղեցու հարավում, վրան 3 տող.*

ԱՅՍԷՀԱ
ԳԻՍՏ
ՂՐԻՆ

Ռ
ԹԳ
Ճ

ՍՅՍ Է ՀԱ|ՆԳԻՍՏ |ՂԱՐԻՆ. ԹՎԻՆ :ՌՃԳ: (1654):

## 77. ՓԱՐԱՋԱՆՑ ԳՅՈՒՂ

*Հինավուրց հայկական գյուղ։ Այժմ բնակեցված է ադրբեջանացած քրդերով։ Գյուղամիջի Թաղածածկ եկեղեցու պատերի մեջ կան տապանաքարեր և մի խաչքար՝ XI դարի զարդաքանդակներով։*

*Ավազանի վրա 1901 թ. հիշատակագրությունն է։ Գյուղից ներքև կա գերեզմանատան։*

*706. ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, հյուսիսային երեսին կենցաղային տեսարան, վերևի թեքության վրա եղծված արձանագրություն. արևմտյան ճակատին խաչ, որից վեր միայն թվականը.*

ԹՎ ՌՃ
Է

ԹՎԻՆ :ՌՃԷ: (1658):